

Թեևն էն: Խօսքի ջաղացք՝ ան այդ խորհրդածուծիւնները կը բանաձեւէ մաքուր հայերէնով մը, անշուշտ գիտական քերմերու անխուսափելի զեղծանումով մը, օտար բառերէ, որ արեւելահայ մտաւորականութեան տրտում սիրագործութիւնն էր ու թսունական թուականներուն: Յանկարծ կ'անդրադառնամ, որ անոր ընկերը բառ մը չէ արտասանած: Խո՛ւլ, հա՛մը: Չեմ համարձակիր հարցընել: Ունիմ տպաւորութիւնը կուռքի մը, որուն անցուցած ըլլան պախուրց, ու քաշեն:

Հասած ենք վտանգաւոր գօտի մը: 900էն յետոյ Նիկիոյ չրջանի հայ գիւղերուն դարաւոր, բնական ապահովութիւնը խանգարուած էր պետական կարգադրութիւններով: Ատոնցմէ ամէնէն ընդվզեցուցիչը գաղթականներու զետեղումն էր, դարերէ ի վեր հայ գեղերով պատկանող արտօրաններուն վրայ: Լեռնէ լեռ, հովտակներու ամէնէն յարմար, «ուզմագիտական» կէտերուն, իբր թէ աւագակներուն վրայ դիտողավայր՝ հաստատուած էին մանրիկ պահականոցներ, հին տարպանտներուն քիչ մը շատ հեշտագին պայմաններէն զուրկ, բայց իրենց նպատակին մեծ յարմարութեամբ մը: Հոն չրջուն ոստիկանները կը գտնէին զէնքը, ուզմամթերքը, ձիերը ու հաղորդակցութեան ուրիշ միջոցներ, մա՛նաւանդ մարդեր, որոնք ո՛չ անտառապահ են, ոչ ալ ժանտարմա, բայց, ծխախոտի մաքսանենգութիւնը հետապնդելու ձեւին տակ՝ կ'ընեն աշալուրջ հետազօտութիւն, եկողէն ու գացողէն: Մեր առջեւ են կիրի բացօթեայ փուռերը:

- վտանգաւոր գօտի է, աղբէր ճան:

Կը լրջանայ յեղափոխականը, «վտանգ» բառին հետով գիտէ ի՛նչ ապրումներ վերյիշելով: Կ'ապահովցնեմ զինքը, վասնզի ցոյց կու տայ որոշ անհանգստութիւն: Թուրքերը կը նշմարուին, իրենց էջերուն ետին, կարմիր իրենց ֆէսերը թօթուելով ձիւնին ճերմակ փոշիէն: Կը յանձնարարեմ լուել: Հակառակ յեղափոխականի վարկին, չի հասկնար ու լուսաբանութիւն կը պահանջէ տղու մը նման, որ ջանար բացատրել իրեն դրուած արգելքին իմաստը: